



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Հայ ժողովրդական հեփիաթների» գիտական հրաաարակու-
թյան տասնմեկերորդ հատորն ընդգրկում է պատմական Հայաստա-
նի Տուրուքերան նահանգի Բուլանըխ (Հարֆ) դավառի Կոփ, Փիոնֆ
Շելխաղուր և Համգաշելս գյուղերի ժողովրդական հեփիաթները:

Բուլանըխը մանում էր Բաղեշի (Բիթլիս) նահանգի (վիլայեթ)
Մուշի գավառի (սանջակ) մեջ:

Բաղեշի նահանգը տարածվում է Վանա լճի արևմտյան ափերից
մինչև Տավրոս և Բյուրակենյան լեռներից մինչև Տիգրիս գետը: Բա-
ղեշի նահանգի սահմաններն են՝ հյուսիսային կողմից՝ Էրզրումի նա-
հանգը, արևելից՝ Վանի նահանգը, արևմուտֆից՝ Խարբերդի, հա-
րավ-արևմուտֆից՝ Դիարբեֆիլի (Տիգրանակերտի) նահանգները:

Տավրոսի լեռնաշղթայով Բաղեշի նահանգը բաժանվում է եր-
կու մասի՝ հյուսիսային և հարավային: Հյուսիսային մասն ընդհան-
րապես հարթ է, այդտեղ են տարածվում Մշո և Մանագիերտի դաշ-
տերը:

Բաղեշի նահանգը բաժանվում էր չորս սանջակի՝ Բաղեշի կամ
Բիթլիսի, Մշո, Սղերդի և Գենջի գավառները:

Մուշի գավառը բռնում էր Բաղեշի նահանգի հյուսիս-արևելյան
մասը: Այդտեղ տարածվում է Մշո դաշտը—Վանա լճի արևմտյան
կողմերում, Տավրոսից մինչև Նեբրովթ լեռը: Դաշտի արևելյան մա-
սը կոչվում է Զխուր, որի միջով հոսում է Արածանիի վտակ Մեղ-
րագետը: Այդ գետերը լավ ոռոգում են Մշո դաշտը: Հողը շատ ար-
գավանդ է, կլիման նպաստավոր:

Հնում Մշո դաշտը կամ պատմական Տարոնը շատ ծաղկած վի-
հակի մեջ է եղել, մեր նախնիները մշակել են խաղող, բրինձ, ընտիր
ցորեն, ծխախոտ, բամբակ և այլն: Այստեղ գարգացած է եղել բուս-
տագործությունը:

Բուլանըխի գավառը մտնում է Մշո դաշտի մեջ. նրա

նշանավոր գյուղերից են Կոփը, Փիոնքը, Շեխյաղուքը: Մշո դաշտը կամ հին Տարոնը հայտնի է պատմական վայրերով. հիշատակության արժանի է Աշաիշատ ֆաղափը: Մշո դաշտի պատմական վայրերից են Հացեկաց և Խորոնֆ գյուղերը՝ Մեսրոպ Մաշտոցի և Մովսես Խորենացու ծննդավայրերը:

* * *

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո արևելահայերը ազատագրվեցին շահական Պարսկաստանի լծից, սակայն արևմտահայերը մնացին սուլթանական Թուրքիայի ծանր լծի տակ:

1828 թվականին սկսված ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանի մի շարք վայրեր: Սակայն, Ադրիանապոլսի պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային վերադարձրեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գրաված վայրեր: Հայերը հարկադրված տասնյակ հազարներով թողեցին իրենց բնակավայրերը և բնակություն հաստատեցին Արևելայի Հայաստանի տարբեր վայրերում՝ Ալեքսանդրապոլում, Ղարափրիսայում, Թալինի, Ապարանի, ինչպես նաև Ախալցխայի շրջաններում և Թիֆլիսում: Հատկապես Բովանդիսից գաղթածները բնակություն են հաստատում Ալեքսանդրապոլում (մեծ մասամբ Փիոնֆ և Կոփ գյուղերից եկած) և Փոփր Ղարափրիսայում:

Վերոնիշյալ վայրերից մեծ գաղթ է կատարվում նաև սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական կոտորածների ժամանակ: Հազարավոր հայեր կոտորածից փրկվելու համար փախչում են և ապաստան գտնում աշխարհի տարբեր ծայրերում՝ Ամերիկա, Ֆրանսիա, Եգիպտոս և այլուր, իրենց հետ տանելով ժողովրդական բանահյուսության անգնահատելի գանձեր:

Հատորում տեղ գտած անտիպ նյութերը (մեծ մասը) վերցրել ենք ՀՍՄՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում պահպանվող Երվանդ Լալայանի ֆոնդում եղած ձեռագրերից: Ինչպես հայտնի է, բազմավաստակ գիտնականն ու անխռնջ բանահավաք-բանագետը 1915—1916 թթ. կազմակերպեց գիտական արշավախումբ Հայաստանի տարբեր գավառներում և գյուղերում ապաստան գտած, Արևմտյան Հայաստանից գաղթած հայերից հավաքելու հայ ժողովրդական հեքիաթները:

Այս հատորի համար Լալայանի ֆոնդից վերցրել ենք 64 հեքիաթ, բոլորն էլ անտիպ: XI հատորը բովանդակող հեքիաթները գրի են առնված 1915 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 20-ը

ընկած ժամանակամիջոցում: Խմբարշավը եղել է Ալեքսանդրապոլում և Փոֆր Ղարաֆիլիսայում (այժմ Ազաաան) և այնտեղ բնակություն հաստատած Բուլանըխի՝ Կոփ, Փիոնֆ և Շելսյաղուր գյուղերի բնակիչներից գրի առել հեֆիաթներ: Այս հատորը կազմող հեֆիաթները գրի են առել բանահավաքներ՝ Երվանդ Պեզազյանը, ինքը՝ Երվանդ Լալայանը, Սենեֆերիմ Շալոյանը, Նազարեթ Պ. Մարտիրոսյանը, Արտաշես Բարսեղյանը, իսկ վեց հեֆիաթ գրի է առել Ս. Հայկունին, որը հրատարակել է «Էմինյան ազգագրական ժողովածուում»:

«Հայ ժողովրդական հեֆիաթների» XI հատորում հիմնականում պահպանել ենք բնագրագիտական այն սկզբունքներն ու կանոնները, որոնք մշակված ու հաստատված են հայ ժողովրդական հեֆիաթների գիտական հրատարակության համար:

Ներկա հատորը բովանդակում է Բուլանըխի, պատմական Տարոնի ժողովրդական հեֆիաթները, ուստի այստեղ դասակարգումը կատարվել է ոչ թե առանձին խմբավորումներով, այլ ըստ իրենց բնույթի և սյուժեների, ըստ որում սկզբում դրված են կախարդական-հրաշքապատում հեֆիաթները, իսկ հետո իրապատում, կենցաղային հեֆիաթները:

Անհրաժեշտ ենք համարում շարադրել բնագրագիտական այն ընդհանուր սկզբունքները, որոնք կիրառվել են XI հատորում:

1. Հեֆիաթների պատումների ամբողջականությունը չի խախտված, հեֆիաթները չենք ենթարկել որևէ փոփոխության: Չենք ուղղել ասացողների ու բանահավաքների «սխալները»՝ պատմելու ընթացքում դեմքերի, թվերի, դեպքերի շփոթում, անհամաձայնություն: Չենք ուղղել նաև գրական, ինչպես նաև օտար լեզուներից փոխառյալ այն դարձվածքներն ու բառերը, որոնք գործածել են պատմողները աղավաղված ձևով:

Օտար լեզուներով գործածված դարձվածքները թողել ենք նույնությամբ, էջատակին բերել ենք թարգմանությունը:

2. Հեֆիաթների վերնագրերը թողել ենք նույնությամբ:

3. Պահպանել ենք հեֆիաթների լեզուն այնպես, ինչպես պատմել են ասացողները և ինչպես գրի են առել բանահավաքները:

Հեֆիաթները վերածել ենք նոր ուղղագրության:

Միօրինակ ենք դարձրել մի շարք բառերի գրության տարբեր ձևերը տվյալ հեֆիաթի մեջ, թողնելով բարբառին հարազատ ձևը:

4. Արտասանական-ուղղախոսական միասնություն ստեղծելու համար միօրինակ ենք դարձրել ավյալ բառի գրության ձևը, նկատի

ունենալով բարբառին կամ խոսվածքին հատուկ հիշտ ձևը՝ օրինակ «աղջիկ» մեծ մասամբ գրվում է «ախչիկ» մեծ միօրինակ ենթ դարձ-րել: Մնացած դեպքերում, երբ խոսքը վերաբերում է հնչյունափո-խության կամ փերականական կողմին, ապա բառերի գրության տարբեր ձևերը թողել ենք նույնությամբ:

5. Հեփիաթների բովանդակությունը հիշտ ըմբռնելու, ինչպես նաև բանավոր խոսքի նրբերանգները հաղորդելու համար շատ կա-րևոր է կետադրական նշանների հետևողական օգտագործումը, մինչ-դեռ ձեռագրերում մեծ մասամբ դրանք բացակայում են, ուստի նըշ-անել ենք տեքստերի, պարբերությունների ու երկխոսությունների բա-ժանումը: Որոշակի ենթ դարձրել ուղղակի և անուղղակի խոսքի կի-րառումը: Իսկ եթե տվյալ ուղղակի խոսքի մեջ կա նաև ուրիշի ուղ-ղակի խոսքը, տարբերելու համար վերջինս վերցրել ենք չակերտ-ների մեջ: Հատուկ անուններից բացի, մեծատառերով ենք տվել հերոսներին արված մականունները, երևակայական վայրերի, երկրների անունները, ինչպես նաև իբրև գործող անձ հանդես բեր-ված կենդանիների անունները:

6. Ուղղել ենք բնագրերում եղած բացահայտ սխալները և վրի-պումները: Ձեռագրերում եղած այն ընդմիջարկությունները, որոնք գալիս են բանահավաքներից ու ասացողներից (բառերի ու ոճերի բացատրություններ, առանձին դեպքերի մեկնաբանություն և այլն) թողել ենք բնագրում, առնելով փակագծի մեջ, երբեմն էլ տալով էջատակի ծանոթագրություններ:

Էջատակին հանդիպած ՄԱ, ՄԲ, ՄԿ նշանները նշանակում են. «Մանրություն ասացողի», «Մանրություն բանահավաքի» և «Մանրություն կազմողի»:

Բուլանըխի բարբառն էլ, ինչպես Շիրակի, Բասենի, Ալաշ-կերտի, Մանազկերտի և Բաղեշի բնակիչների խոսվածքը պատկա-նում է «ԿԸ» հյուսիսին:

Ներկա հատորը կազմող Բուլանըխի Փիոնի, Կոփ, Շեխյաղուր գյուղերի բնակիչների խոսվածքն ու բարբառը նույնն է, միայն այն տարբերությամբ, որ ոմանք ավելի շուտ գաղթելով իրենց բնակա-վայրերից, մասամբ ենթարկվել են տեղական լեզվի ու բարբառի ազդեցությանը, իսկ ոչ եկողները պահպանել են հայրենի բնակա-վայրերի խոսվածքն ու բարբառը:

Բուլանըխի բարբառում ևս սկզբում ընդունում են շնչեղ «հ», որը ձեռագրերում և առհասարակ սկզբնաղբյուրներում նշանակված է «յ» կիսաձայնով, մինչդեռ դա ոչ «յ» է և ոչ «հ», այլ շնչեղ «հ»,

որը տարբերակելու համար նշանակել ենք «ն» ապաքարցով՝ հ'ուր, հ'առաջ, հ'աղբուր և այլն:

Հեփիաթների XI հատորն ունի հետևյալ կառուցվածքը՝

1. Բ ն ա գ ռ ե ռ, որը բովանդակում է Բուլանըխի Փիոնի, Կոփ և Շեխյաղուր գյուղերի ասացողներից գրի առնված 64 հեփիաթներն ու Սարգիս Հայկունու «էմինյան ազգագրական ժողովածուում» տըպագրված վեց հեփիաթը, որ գրի է առնված Համգաշխ գյուղի ասացողներից:

2. Մ ա ն թ ա գ ռ ու թ յ ու ն ն ե ռ, ուր բերված է ներկա հատորում գետնդված յուրաքանչյուր հեփիաթի մասին եղած տեղեկությունները՝ հեփիաթի գրառման, ժամանակի, տեղի, ասացողի, գրի առնողի և գրառման այլ մանրամասնությունների վերաբերյալ:

3. Բ ա ո ա ռ ա ն—բառարանի մեջ տրվում են հատորում հանդիպող բարբառային դժվար հասկանալի բառերի, ունեների ու արտահայտությունների, ինչպես նաև օտար և փոխառյալ բառերի բացատրությունները:

Բառերի բացատրության ժամանակ նկատի է առնված սույն հատորում տեղ գտած բառերի իմաստն ու առումը: Նույն բառը կամ ոճը եթե ունի մի քանի առումներ ու իմաստային տարբերություններ, ապա այդ բառի բացատրության տակ տրվում են տարբեր իմաստները:

Այն բառերը, որոնք փակագծում բացատրվում են բանահավաքների, ասացողի կամ գրի առնողի կողմից, բառարանում չեն արտահայտված:

Բառարանի համար օգտագործել ենք Հրաչյա Աճառյանի՝ «Հայերեն գավառական բառարանը» (Թիֆլիս, 1913 թ.), Ստեփան Մալխասյանցի՝ «Հայերեն բացատրական բառարանը» (Երևան, 1944 թ.) և այլ բառացանկեր:

4. Ց ա ն կ ե ռ՝ ա) հեփիաթներն ըստ տեղի և ասացողների, բ) հեփիաթներն ըստ այբբենական կարգի և հերթական համարների:

